# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«06» փետրվարի 2015 թվական N 20–Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ N 108/3 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գորկու փողոց N 108/3 հասցեի անշարժ գույքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09102014-08-0025 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գորկու փողոց N 108/3 հասցեի 157,7 (մեկ հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 216,5 (երկու հարյուր տասնվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի հունվարի 22-ի թիվ-004 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 157,7 (մեկ հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինության և 216,5 (երկու հարյուր տասնվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ(0)** |
|---|---|---|
| Ա. Ադամյան _____ | | |
| Գ. Ադամյան _____ | | |
| Ա. Բաղեյան _____ | | |
| Ա. Բաղրամյան _____ | | |
| Ա.Գրիգորյան _____ | | |
| Վ.Եդիգարյան _____ | | |

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«06» փետրվարի 2015 թ.**